

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ
ՆԿԱՏԱՍԱՐ. ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019).....7-17

Արամ Գասպարյան

ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.).....18-30

Տարթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ
(2016, 2020 թթ.). ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ.....31-49

Արմինե Հակոբյան

ԱՐՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ»
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԿՈՆՑԵՊՏԸ.....50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ

ԱՇԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....66-78

Խաղիջե Ահմադ Մեհրաբի

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ.....79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլյան

ԻՄԱՍ ԽՈՍԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱԴԻՀ»
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ,
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....87-97

Ալեն Հայրասյետյանց

ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ
ԲԱՅԱԶԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ»,
ԹԵ՛ ԽՈՐՀՈՒՐԴ».....98-110

Նունիկ Դարբինյան

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ
ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....111-133

Տիգրան Չանդոյան

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿ-
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ.....134-144

Թյուրքագիտություն

Կուրադայ Ուրազանևա, Վերունիկյա Ռազունովսկայա, Ալեքսանդր Մաֆայրյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒ-
ԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-
ԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ145-166

Արշակ Գևորգյան

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ.
ԹՈՒՐԹԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....167-186

Մարգարիտա Կրտիկաշյան

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՉՑԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ
ԵՐԱՃՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.....187-200

*Սամվել Ռամազյան **

ԵՎՐՈՊԱՅՈՒԲ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ
ԹՅՈՒՐԹԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ.....201-223

Անի Ոսկանյան

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....224-238

Ռուսլան Յականյան

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ,
ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ).....239-247

Հովհաննես Խորիկյան

ԿԱՊԱՐՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ.....248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan

EGYPT'S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE
PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI.....7-17

Aram Gasparyan

ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF
NATIONAL IDENTITY (1962-1999).....18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan

COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN
ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR
PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS.....31-49

Armine Hakobyan

COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR
AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA".....50-65

Mohammed Haj Ibrahim

THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN
THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT.....66-78

Khadije Ahmad Mehrabi

THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES
IN THE TEXT OF THE QUR'AN.....79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan

THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL
PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH"
DOCTRINE.....87-97

Alen Hayrapetyanc

THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF
THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION:
"BLESSING OR ADVICE?".....98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY
TALES AND FOLKLORE..... 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH
NATIONALISM IN THE TERRITORY OF
THE REPUBLIC OF TURKEY..... 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL
TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS
CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE
TRANSLATIONS INTO ARMENIAN..... 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID
NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE:
THE TURKISH DEEP STATE..... 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN
THE TURKISH MUSIC SCENE..... 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK)
IN ARMENIAN AND TURKIC EPICS..... 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN
THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT,
ADANA PROVINCE..... 224-238

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY
(EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW,
ULTRA-LOW DATES)..... 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA
IN ACHAEMENID PERSIA..... 248-261

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱԶՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

*Բանալի բաներ՝ Տիգրան Չուխաշյան, Թուրքիա, թուրքահայեր,
հայկական համայնք, երաժշտություն, օպերա, քայլերգ*

Հայերը, դարեր շարունակ ապրելով օսմանյան կայսրության և ներկայիս Թուրքիայի Հանապետության տարածքում, իրենց զգալի ներդրումն են ունեցել բազմաթիվ բնագավառներում: 19-րդ դարի սկզբին օսմանյան բազմատարր հասարակության մեջ դեռևս ձևավորված չէր երաժշտական-համերգային կանոնակարգված կյանք, չկային արհեստավարժ երգահաններ ու կատարողներ: Երաժշտական բնագավառում տիրապետող ժողովրդական ու գուսանական բանավոր ավանդվող երաժշտությունն էր: Դեռևս Մահմուդ Բ սուլթանի օրոք (1808-1839) մեծ քաղաքներում, գավառներում հայ երաժիշտների, երաժշտության հայ ուսուցիչների բեղմնավոր գործունեության արդյունքում հիմնադրված սիմֆոնիկ, կամերային, փողային նվագախմբերը, երգչախմբերը, երաժշտական միություններն ու հրատարակությունները, թատերախմբերը, պարային մասնավոր դպրոցները, սպորտային տարբեր խմբերն ու թիմերը ողջ երկրով մեկ, հասարակական հարյուրավոր կազմակերպություններ, առանձնապես Ստամբուլը, դարձնում էին եվրոպական որակների հավակնող քաղաք: Հայ մասնագետները երաժշտություն են դասավանդել զինվորական, ռազմածովային դպրոցներին կից երաժշտական դպրոցներում,

¹ ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, մագիստրոս, էլ. փոստ՝ margaritakrtikashyan@gmail.com

աճեցրել շատ ու շատ երաժիշտներ, այդ թվում թուրքական երաժշտության շատ երախտավորների: Օսմանյան կայսրության երաժշտական կյանքի զարգացման հայելի են հանդիսացել հայ աշուղական, դասական ստեղծագործությունների ժառանգությունը, թատրոնի (օպերետներ, օպերաներ), երաժշտական «դպրոցների», երգչախմբերի, փողային, լարային, ազգային, ապա նաև սիմֆոնիկ նվագախմբերի հիմնադրումն ու դրանց բուռն գործունեությունը ոչ միայն արևմտահայ մթնոլորտում²: Առաջին օպերետներն ու օպերաները, ինչպես նաև երաժշտական թատրոնները, նույնպես ստեղծվել են Կ.Պոլսում արևմտահայերի ջանքերով: Դրանք առաջինն էին ամբողջ Մերձավոր Արևելքում, ուստի ունեցել են պատմական մեծ նշանակություն: Այդ նվիրական գործում առանձնակի դեր է ունեցել Տիգրան Չուխաջյանը: Մեր հողվածում պատմելու ենք Տիգրան Չուխաջյանի կյանքի և գործունեության մասին, հատկապես թուրքական երաժշտական ասպարեզում իր ներդրումների մասին: Նա, կրթություն ստանալով Իտալիայում, հայազգի Օսմանյան կայսրության առաջին կոմպոզիտորներից էր, ով տիրապետում էր սիմֆոնիկ, կամերային և օպերային երաժշտության բարդ ժանրերին, բազմաձայնության տարբեր ձևերին, նվագախմբային գրելաձևին և այլն: Անդրադառնալով թուրքական երաժշտական մշակույթի համար Չուխաջյանի գործունեության նշանակությանը՝ Մահմուդ Ռահիբը նշում է, որ նա առաջին կոմպոզիտորն էր, որ աշխատում էր թուրքական երաժշտությունը հաղորդակից դարձնել եվրոպական արվեստին³: Տիգրան Չուխաջյանը հայ դասական պրոֆեսիոնալ

² Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Բ.Ստեփանյան Հ. տպ., Երևան 2012, էջ 540:

³ Արևմտահայ երաժշտարվեստը Հայոց ցեղասպանությունից առաջ, http://www.genocidemuseum.am/arm/online_exhibition_11.php?fbclid=IwAR24TnKfT_jZmCGSLDrXW8zT0_BdqrLhaz4cXhKc3wbOmuYtWBwCMRBBqY_, (Հասանելի է 04.02.2022)

կոմպոզիտորական դպրոցի սկզբնավորողն է, ում երաժշտությունը նշանավորում է մի ամբողջ պատմական դարաշրջան և խոր հետք է թողել հայ դասական երաժշտության պատմության մեջ՝ զգալիորեն պայմանավորելով այդ արվեստի հետագա առաջընթացը⁴։ Տիգրան Չուխաջյանի (1837-1898) անունը կապվում է թուրքական օպերայի, կոմիկական, օպերաների (օպերետների), քայլերգների ստեղծման պատմության հետ։ Հայրը՝ Գևորգը, եղել է սուլթան Աբդուլմեջիդի արքունի ժամագործապետը, որը երգող ժամացույցներ է հնարել։ Թուրք երաժշտագետները Տիգրան Չուխաջյանին համարում են պոլիֆոնիկ երաժշտության հիմնադիր։ Պոլսում դաշնամուր է սովորել իտալացի Մանձոնիի մոտ։ 1862-66 թվականներին Միլանում բազմաթիվ մասնավոր երաժշտական դասերի է հետևել, գտնվել Վերդիի երաժշտության ազդեցության տակ։ Նա հեղինակ է Խասքեյի թատրոնի, «Արևելյան թատրոն»-ի մի քանի ողբերգությունների համար գրված երաժշտության։ 1862 թվականի Նաումի թատրոնում ներկայացվելիք Թ.Թերզյանի «Սանդուխտ» ողբերգության համար գրել է «Կենաց երգը»։ Նա է հիմնադիրը դասական քայլերգային երաժշտության։ Հեղինակել է կայսերական քայլերգեր։ Երաժշտություն է գրել Ռ.Սետեֆճյանի «Վարդան Մամիկոնյան» և Պետրոս Դուրյանի «Վարդ և Շուշան» պիեսների համար։ Երբ «Արևելյան թատրոն»-ում կատարվում էին հատվածները նրա ստեղծագործություններից, քայլերգեր, փոքր կտավի գործեր, ապա Չուխաջյանն ինքն էր կանգնում դիրիժորական կամրջակին ու ղեկավարում նվագախումբը։ Իր նվագախմբով հանդես է եկել նաև պետական, թուրք ազգային տոների ժամանակ, զինվորական նախարարությունում և այլուր։ Հայկական առաջին օպերաների ստեղծումն ուղեկցվեց

⁴ Ասատրյան Ա, Տիգրան Չուխաջյանի Ստեղծագործության պատմական նշանակությունը, Երևան, 2015, էջ 171

երաժշտական թատրոնի հիմնարկմամբ: Ազգային օպերային թատրոնի անհրաժեշտությունը Տ. Չուխաճյանը գիտակցեց դեռևս 1870-ականներին: Տ. Չուխաճյանի և Տ. Գալեմճյանի ղեկավարությամբ ստեղծված «Օսմանյան օպերային թատերախումբը» հայ իրականության մեջ բացառապես հայ արտիստներից կազմված անդրանիկ երաժշտական թատերախումբն էր (թատերախումբն առաջինն էր ողջ Մերձավոր Արևելքում), որի ձեռքում հայտնվեց երաժշտական ներկայացումներ բեմադրելու մենաշնորհը: Մերձավոր Արևելքում առաջին անգամ հայի հեղինակությամբ և հայի ղեկավարությամբ, բացառապես հայ արտիստների մասնակցությամբ բեմադրվում են օպերաներ: Ըստ Չուխաճյանի՝ խմբի խաղացանկը պիտի բաղկացած լիներ մի կողմից՝ արևմտաեվրոպական հեղինակների (մասնավորապես՝ Օֆենբախ, Դոնիցետտի) օպերետներից, մյուս կողմից՝ երաժշտական թատրոնի համար հայ կոմպոզիտորների գրած օպերաներից, սլյալ դեպքում՝ իր երեք կոմիկական օպերաներից: Խումբը պիտի բեմադրություններով հանդես գար տեղում, նաև մեկնեք հյուրախաղերի երկրից դուրս՝ տարածելով հայկական օպերային արվեստ Չուխաճյանի թատերախմբի ավանդույթները հետագայում շարունակում է կոմպոզիտորի առաջարկությամբ թատերախմբի ղեկավարությունն ստանձնած դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ Սերովբե Պենկյանը, խմբի երաժշտական մասի ղեկավարը (նվագավար, խմբավար) Չուխաճյանն էր: Բացառիկ էր Պենկյանի թատերախմբի դերը հայ երաժշտական թատրոնի զարգացման գործում: Նա հայ երաժշտությունը հնչեցրեց Թուրքիայի սահմաններից դուրս՝ Հունաստանում և Եգիպտոսում: Հետ-ագայում այս գործունեությունը շարունակեց թատերական գործիչ, դերասան և ռեժիսոր Արշակ Պենկյանը՝ 1908-ին Կ.Պոլսում հիմնադրելով Օսմանյան երաժշտական թատրոնը: Տ.Չուխաճյան-

Ս.Պենկյան-Ա.Պենկյան թատերախմբերի ստեղծագործական ավանդույթները գտան իրենց տրամաբանական շարունակությունը, այս անգամ արդեն մայր հայրենիքում: ՀԽՍՀ ժողկոմխորհի 1932թ. -ի մայիսի 13-ի որոշման համաձայն՝ 1933-ի հունվարի 20-ին Երևանում Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ իր դռները բացեց օպերայի և բալետի պետական թատրոնը⁵: Չուխաջյանը 1862 թվականից «Հայ երաժշտական ընկերության» նվիրյալ գործիչներից է եղել: Անդամակցել է նրա տպագիր օրգանի՝ «Քնար Հայկական»-ի էջերում հրատարակվող երգերի քննությամբ զբաղվող հանձնաժողովին: Նա նույնիսկ բանաստեղծություններ է գրել եվրոպական հայտնի մեղեդիների հիման վրա: 1863 թվականին Վ. Փափագյանի հետ հրատարակել են «Օսմանեան երաժշտութիւն» (ընտիր եղանակներ բիանոյի ու երգելու համար) ամսօրյա հանդեսը պրակներով (տիտղոսաթերթը՝ թուրքերեն, հայերեն, ֆրանսերեն, հունարեն լեզուներով): 1865 թվականին Միլանից վերադարձին Թ.Թերգյանի «Արշակ Բ»-ի հիման վրա գրում է առաջին հայկական, հայրենասիրական, օպերան, որն իր ազգային բովանդակության պատճառով չի ներկայացվել և ապա գրաքննության պատճառով անվանվել է «Օլիմպիա»: Նախերգանքը կատարվել էր մշակույթի գործիչների հովանավոր, գեղարվեստասեր Հակոբ Պալյանի տան սալոնում, որին և ձոնել է օպերան: 1869 թվականին իտալական մի խմբի կողմից Նաումի թատրոնում իտալերենով ներկայացվել է օպերան «Օլիմպիա» անվամբ: Հայերենով այն չի ներկայացվել: Որպես դրամատիկական պիես՝ այն ներկայացրել են Արևելյան թատրոնը, տարբեր թատերախմբեր:

Դրա փոխարեն օպերետները, որոնց լիբրետոն է եղել է

⁵ Ասատրյան Ա, Տիգրան Չուխաճյանի Ստեղծագործության պատմական նշանակությունը, Երևան, 2015, էջ 189-190:

հիմնականում թուրքերեն, (հայատառ թուրքերեն, ապա թարգմանվել նաև մյուս լեզուների) մեծ ժողովրդականություն են վայելել, ամենուր երգել դրանց երգերը: Չուխաջյանի աննախընթաց հաջողությունը շատերին է ոգևորել՝ բեմ հանելով նոր դերասանների ու նոր գործեր: «Արիֆի խորամանկությունը» գրվել է իտալացի կոմպոզիտոր Ալբրետտոյի աջակցությամբ: Այն ֆրանսիացի կոմպոզիտոր Բուալըդիեռյի (1775-1834) «Գյուլի նոր իշխանը» երկի հիման վրա թուրքական բեմի համար Գոգուլի «Ռեվիզորի» մի տարբերակն է: Նրա պրիմիերան 1872 թ. երկարատև ու տքնաջան փորձերից հետո է եղել, որի արդյունքում խումբը «սովորեց չպոռալ, այլ երգել կամ արտասանել»: «Ռեվիզորի» թուրքականացված փոխադրությունը բեմադրվել է Հովհաննես Աճեմյանի կողմից 1872 թվականին Կետիկ փաշայի «Օսմանյան թատրոն»-ում, 30-40 հոգանոց խմբով: Պրիմադոնան՝ սուպրանո Շադիկ Քոյլույանն է եղել, Հովհաննես Աճեմյանի կինը: Հակոբ Վարդույանը կատարել է գլխավոր դերերգերից մեկը: Նույնի հայերեն ներկայացման բեմադրությունը եղել է Թովմաս Ֆասուլյաճյանինը: 1883 թվականին սուպրանոյի կամ բարիտոնի համար գրված «Ավե Մարիա»-ն տպվել է Փարիզում՝ Լևոն Համբարձումյանի հրատարակչությունում: Տիգրան Չուխաջյանը գրել է նաև քայլերգեր՝ նվիրված սուլթաններին (Աբդուլազիզ, Աբդուլ Համիդ Բ), գրել է Իշխանաց կողմնակիցներին նվիրված գործեր («Քընալըի (Պրոթի) պոլկա» , 1871 թվականին Ազիզիե մարշ)⁶: Պակաս կարևոր չէ նշել, որ ըստ թուրքական աղբյուրների՝ Չուխաջյանի գրչին է պատկանում նաև Օսման Փաշային նվիրված բավականին հայտնի «Պլեվնե մարշ»-ը: Երթը Օսման փաշայի մասին է, ով Պլեվնեի պաշտպանության ժամանակ

⁶ Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում Բ., Երևան, 2012, էջ 560-561

օսմանյան գորքերի հրամանատարն էր:

Այս երաժշտության մաքամը քրդական է, իսկ տոնը իտալական տերմինով՝ *Con tristezza*, որը նշանակում է՝ տխուր, ծանրությամբ և ծանր սրտով: Երթի ստեղծման տարեթիվը հստակ չէ, նշում են, որ 1910-ին երթը երգվել է Հաֆրզ Յաշար բեյի եւ Սազ կոմիտեի կողմից, ներկայիս բառերից մի քիչ տարբեր ձևով, «Հին Պլեվնեի Մարշ» անունով, այնտեղ նաև ասվում էր, որ երթը պատկանում էր Մեհմեդ Ալի բեյի գրչին: Սակայն այլ աղբյուրներ էլ նշում են, որ երթի խոսքերը պատկանում են Միթհաթ Էֆենդիին, իսկ երաժշտությունը՝ հայազգի Տիգրան Չուխաջյանին: Որոշ աղբյուրներ էլ գրում են, որ երթի բառերը պատկանում են Ժորժ Պերային, իսկ երաժշտությունը՝ Էդուարդ Թաքսիմին: Նաև հայտնում են, որ այդ անուններն իրական չեն, այլ մարդկանց կեղծանուններ են⁷:

Չուխաջյանը նաև հրատարակել է բալետային երաժշտության առանձին մասեր, ինչպես օրինակ «Էբուդիաթ» և «Զեմիրե» օպերաներում՝ «Արաբական մեծ բալետ»-ը (դաշնամուրի համար): Դրանք հիմնականում դաշնամուրի համար են և տպագրվել են հիմնականում ֆրանսերեն տիտղոսաթերթերով: Նա է ղեկավարել Օսմանյան թատրոնում բեմադրված օպերա-օպերետները, օրինակ՝ «Ժիրոֆիլե-ժիրոֆյա»-ն (1875): Մշակել ու գործիքավորել է ժամանակի թուրք կոմպոզիտորների գործերը, ինչպես 1876 թվականին Հաջը Արիֆ բեյի երգերը, որը նոտագրել է Լևոն Խանճյանը, իսկ դաշնամուրի համար մշակել է Չուխաջյանը: Հետաքրքիր է, որ սրա նոտաներն անգամ ֆրանսերենով են տպագրվել Պոլսի Զարդարյան տպարանում: Ժամանակի բոլոր օսմաներեն, ֆրանսերեն, հայերեն ու հայաստառ թուրքերեն մամուլը հիացմունքով է արձանագրել

⁷ Plevne Marşı, https://www.turkcebilgi.com/plevne_mar%C5%9F%C4%B1#post, (Հասանելի է 03.03.2022)

թուրքական առաջին օպերետի ներկայացման փաստը: Նամըք Քեմալը «Ibret» թերթում հիացական տողեր է նվիրել պատմական այս իրադարձությանը: Տիգրան Չուխաջյանի հիացողներից Եղիազար (Գարեգին) Մելքոյանը 1500 ոսկի է տրամադրել օպերետային խումբ կազմավորելու, 3 նոր օպերետներ (տարեկան մեկ) ներկայացնելու համար: Դրանք էին «Քյոսե Քեհյան» (1874), «Լեբլեբիճի Հոր-Հոր Աղան» (1876): Երրորդ օպերետի համար ծախսերը չեն բավարարել:

Թուրք դասական երաժշտության հիմնադիր կոմպոզիտոր, երաժշտագետ, դիրիժոր Տիգրան Չուխաջյանի գործերը կատարում էին նաև իտալական օպերային խմբերը: Հունական թատերախմբերն այն ներկայացնում էին Հունաստանում, Եգիպտոսում, Ռումինիայում, Բելգիայում, Անգլիայում: Ժամանակի մամուլը առատորեն հիացական կարծիքներ է հրատարակել այս ներկայացումների մասին»: 1895 թվականին Չուխաջյանի «Զեմիրեն» իտալական «Ֆրանսիկ» խմբի կողմից ներկայացվում է Փարիզի «Օպերա-բուֆում»: Տիգրան Չուխաջյանը 1862 թվականին հրատարակել է «Քնար Արևելյան» պարբերականը, 1866 թվականին հիմնադրել է Օսմանյան Օպերային միությունը: 1874 թվականին 30 երիտասարդ երաժիշտ ուսանողների հետ ձեռնարկում է թուրքական առաջին օպերային թատրոն հիմնադրելու աշխատանքները Բեյոզլուի Հաչոպուլոշուկայի Ադամի համերգային սրահում, որը կարճ ժամանակ ծառայել էր որպես թատրոն: Թատերական կյանքի այս բուռն շրջանում հայ ճարտարապետների կողմից կառուցվում էին թատրոնի շենքեր ոչ միայն հայկական թատերախմբերի համար: Օսմանյան օպերային կոմպանիան Տիգրան Չուխաջյանի ու Տիգրան Գալեմճյանի ղեկավարությամբ՝ համախմբելով տեղացի և օտար ուժերը՝ 1875 թվականին Բեյազիդում (թաղ Պոլսում) 800 տեղանոց համերգային դահլիճ են ստեղծում: Եվ այն շնորհիվ

արվեստի հովանավորի կողմից 1500 ոսկի նվիրատվության: Եռաշաքթ օթյակներով գեղեցիկ ու նոր դահլիճում 1876 թվականին շոնդալից հաջողությամբ բեմադրվում է «Լերլերիճի Հոր-Հոր աղան»: Մինչ այդ՝ 1874 թվականին, այն ներկայացվել էր Ռամազանի տոների սկզբին ու սիրվել բոլորի կողմից⁸⁷: Անվիճելի է, որ «Լերլերիճի Հոր-Հոր աղա» օպերետը թուրքական միջավայրում դեռ իր ստեղծման ժամանակից չափազանց սիրված ու հայտնի է եղել (նաև որպես ֆիլմեր): Միայն թե այն ոչ թե թուրքական երևույթ է, օսմանյան մշակույթի արտահայտություն, այլ արևմտահայ հանճարի ստեղծած անմահ մի գործ: Այն հայ մշակույթի անհամար ներդրումներից է օսմանյան կայսրությունում, որն իր հայկական շնչով ու ոգով չի կարող շփոթվել որևէ ուրիշ ազգի ստեղծագործության հետ⁹: Տիգրան Չուխաջյանը իր այս կոմիկական օպերան ստեղծելիս առատորեն օգտվել է Կ.Պոլսի քաղաքային երաժշտական կենցաղում հնչող երգերի, ռոմանսների ու պարեղանակների ոթմերից ու հնչերանգներից, գրել է կենսուրախ, պարզ ու հասկանալի երաժշտություն, որի շնորհիվ էլ օպերետը ձեռք է բերել լայն ժողովրդականություն, բազմիցս բեմադրվել ոչ միայն Թուրքիայի քաղաքներում, այլև Մերձավոր Արևելքի և ոչ միայն Մերձավոր Արևելքի մյուս երկրներում՝ Եգիպտոսում, Հունաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Բալկաններում ու անգամ Կովկասում: Իրենց գեղարվեստական հատկանիշներով առանձնապես հաջողված են Հոր-հոր աղայի և Ֆատինեի երաժշտական կերպարները: Պատահական չէ, որ հենց այս

⁸ Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում Բ., տպ., Երևան, 2012 (Էջ 562)

⁹ Թուրքիայում նշում են Տիգրան Չուխաջյանի «Լերլերիճի Հոր-Հոր աղա» կոմիկական օպերայի 140- ամյակը, http://archive3.ankakh.com/article/82454/%E2%80%8Bthurqiayum-nshum-yen-tigran-chukhadjyani-%C2%ABlyeblyebidji-hvor-hvor-agma%C2%BB-kvomikakan-opyerayi-140-amyake_, (Հասանելի է 07.03.2022)

գործող անձանց երգերն են, որ լայնորեն տարածվել են¹⁰: Դրանցից են՝ «Մենք քաջ տոհմի զավակներն ենք», «Զմեռն անցավ» և այլն: «Մենք քաջ տոհմի զավակներն ենք» կամ թուրքերենում "Biz Köroğlu Yavrusuyuz" երգը բազմիցս կարող ենք լսել առանձին կատարումներով և՛ համերգային, և՛ առօրյա միջոցառումներում: Ստամբուլի քաղաքային թատրոնի, Հանրապետության օպերետայի, Օզան օպերետի, ժողովրդական օպերետի, թուրքական օպերետի, Նոր ժողովրդական օպերետի, Նաշիտ Օզջանի և Զեմալ Սահիրի բեմադրված «Լերլեբիջի Հոր-հոր աղան» դարձել է թուրքական օպերետի ամենահայտնի գործերից մեկը: «Լերլեբիջի Հոր-հոր աղա» անունով երկու ֆիլմ է նկարահանվել: Առաջինը 1923 թվականին «Քեմալ Ֆիլմ»-ի կողմից Էրթուրդուլ Մուհսինի ղեկավարությամբ նկարահանված համր ֆիլմն է, սակայն այն այդքան էլ ուշադրություն չի գրավում, որքան օպերետը: Երկրորդը՝ Մյումթազ Օսմանի (Նազրմ Հիքմեթ Ռան) ֆիլմն է, որը ներկայացվել է 1934 թվականին «Իփեք Ֆիլմ»-ի կողմից, ֆիլմի ռեժիսորը կրկին Էրթուրդուլ Մուհսին էր:

Զայնով նկարահանված ֆիլմում խաղում էր Բեհգաթ Բուդակը, ով առաջին ֆիլմում նույնպես մարմնավորել էր Լերլեբիջի Հոր-հոր Աղային: Ֆիլմի մյուս դերասաններն են Վասֆի Ռեզա Չոբու, Ֆերդի Թայֆուր, Ֆերիհա Թևֆիկ, Նեկլա Մերթել, Մահմուտ Մորալի, Մուամմեր Քարաչա, Քադրի Օզելման, Մելեք Թայֆուր, Հազրմ Քյորմյուքչու և Ֆաթմա Անդաչ: Սակայն այս նոր ֆիլմն էլ այդքան ուշադրություն չի գրավում, որքան օպերետը: Տարիներ անց՝ 1975 թվականին, «Լերլեբիջի Հոր-հոր Աղան» նկարահանվել է

¹⁰ Մուրադյան Մ., Ուրվագիծ արեւմտահայ երաժշտության պատմության (XIX դար եւ XX դարասկիզբ), (էջ 174)

որպես հեռուստաֆիլմ¹¹10: Տիգրան Չուխաջյանը 2 գործողությամբ օպերային երաժշտություն է գրում թուրք առաջին լուսավորիչ գրող Շինասիի «Պոետի ամուսնությունը» պիեսի համար (1874): Հարկ է նշել, որ այս պիեսը իր մակարդակով չի բավարարել հայ պրոֆեսիոնալ թատրոնների դերասանապետերին ու այն բեմ է բարձրացել միայն սիրողական մի խմբի ջանքերով: Նույն այս պիեսի թեմաներով 1874 թվականին Չուխաջյանը գրել է 3 գործողությամբ և 1 արարով կոմիկական օպերա՝ «Դպրոցական զվարճություններ»: 1874 թվականին գրել է «Դպրոցական ուսուցիչը» կոմիկական օպերան: Չուխաջյանը մի գեղեցիկ քայլերգ է գրել նաև Նամըք Քեմալի «Հայրենիք կամ Սիլաստրա» հայրենասիրական դրամայի համար, որ պատվիրվել էր Հակոբ Վարդովյանի թատրոնում ներկայացվելու համար: Այս դրաման բազմիցս ներկայացվել է՝ ունենալով մեծ հաջողություն, անվանի դարձնելով հեղինակին, որը նաև առատաձեռն վարձատրվել է դրա համար իր հայ դերասանապետից: Բնականաբար, Չուխաջյանը իր երաժշտությունով նպաստել է գործի հաջողությանը: 1878 թվականին Չուխաջյանը Ս.Պենկյանի օպերետային խմբի հետ՝ որպես իր ստեղծագործությունների դիրիժոր, մեկնել է հյուրախաղերի Էդրինե, որտեղ ռուս դեսպան Իգնատևը նրան հանձնել է Ալեքսանդր Երկրորդ ռուսական ցարի «St.Svyatoslav» շքանշանը: Ավելի ուշ Պոլսում իր ստեղծագործություններով մասնակցել է մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչին նվիրված երեկույթին: Արժանացել է Արդուվհամիդ Բ-ի կողմից շնորհների, ֆրանսիացի ու իտալացի միապետների շքանշանների: 1882-83 թվականներին Սկյուտարի ձեմարանում երաժշտություն է դասավանդել:

¹¹ İzmir’de ölen ünlü besteci: Dikran Çuhacıyan
<https://izmirkenttarihi.tr.gg/%26%23350%3Behrin-Sesli-Tarihi.htm>, (Հասանելի է 03.03.2022)

1885 թվականին Սերովպե Պենկյանի 68 հոգանոց օպերետային խումբը մեծ հաջողությամբ հյուրախաղերով հանդես է եկել Եգիպտոսում, Հունաստանում, Ռումինիայում, Բալկանյան մյուս երկրներում՝ տարածելով չուխաջանական երաժշտությունը: Եգիպտոսում Խտիվ Թեվֆիկ փաշայի հովանավորությամբ «Լեբլեբիճի Հոր-հոր աղան» 66 անգամ ներկայացվել է, ու երկու անգամ էլ ֆիլմ է նկարահանվել: Գերմանական «Ֆրիցի Ալկո Ալման» թատերախմբի կողմից «Լեբլեբիճի Հոր-հոր աղան» ներկայացվել է նաև Գերմանիայում: Այս օպերետը ներկայացվել է Լոնդոնում (1909), Թիֆլիսում (1912), Փարիզում (1938) և Երևանում (1952): Տիգրան Չուխաջանը գրում է նաև «Իդիանա» կոմիկական օպերան, դրա հետ զուգահեռ «Ալեքսինազ» երաժշտական դրաման: Չուխաջանի «Զեմիրեն» կոմիկական օպերայի դաշնամուրային պարտիտուրան տպագրվել է Պոլսի Ս.Հովսեփյան տպարանում և ձոնվել հեղինակի աշակերտ, սուլթանի քարտուղար Նաիմ բեյին: Այս օպերան, որ ստեղծվել էր 1890 թվականի առաջին թատերախմբի կողմից, ներկայացվել է Ֆրանսիական թատրոնում ֆրանսիական համայնքի ջանքերով: Տիգրան Չուխաջանը, նվագախոսով իր ստեղծագործություններից, համերգ է տալիս Բեյոզլուի գերմանական էլիտար «Տևտոնյան» ակումբում: Սուլթանի կողմից Տիգրան Չուխաջանը արժանացել է 4-րդ աստիճանի Mecidiye-ի: 1894 թվականին Պոլսի ֆրանսիական թատրոնում «Զեմիրեն» ներկայացվել է իտալական, իսկ 1895 թվականին Փարիզի «Սալանդիդ» տավերնայում հայտնի մաեստրո Ալդերը ղեկավարել է Չուխաջանի «Օլիմպիա» օպերայի նախերգանքը և «Արևելյան ֆանտազիան»: Տիգրան Չուխաջանը Պոլսի պատրիարք Ներսես Բ Վարժապետյանի (1837-1884) մահվան

առթիվ գրել էր «Մարշ Ֆյունեբրե» (Ռեքվիեմ), որը ստեղծելիս, ասում են, իր ձեռքի տակ է ունեցել Վերդիի «Օթելո»-ն:¹² Արդուլիամիդ Բ-ին «Մեծ քայլերգ» և Օսմանյան նավատորմին ձոնված հայտնի քայլերգերի հեղինակը Փարիզյան շրջագայությունից հետո մեկնում է Իզմիր: Խորը հուսահատության և քաղցկեղ հիվանդության ու աղքատության մեջ կնքում է իր մահկանացուն 61 տարեկան հասակում: Չուխաջյանի թաղմանը նույնպես հնչել է պատրիարքին ձոնված ռեքվիեմը: Նա թաղվում է Իզմիրի հայկական գերեզմանատանը, նրա գերեզմանին տեղադրված կիսանդրին Գեղարվեստի առաջին դպրոցի արձանագործության բաժնի հիմնադիր, թուրքական քանդակագործության երախտավոր Երվանդ Օսկանի գործն է եղել¹³: Պետք է նշենք, որ այսօր նրա գերեզմանի տեղն անհայտ է:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք եզրակացնել, որ Չուխաջյանի ավանդն անուրանալի է օսմանյան երաժշտական մշակույթի ձևավորման ու զարգացման, մասնավորապես արևմտաեվրոպական երաժշտական ավանդույթների կայսրության ներմուծման-հիմնադրման գործում: Պակաս կարևոր չէ նշել, որ մեր օրերում նրա կողմից գրված շատ ստեղծագործություններ բավականին հայտնի են Թուրքիայի բեմերում և կատարվում են թուրք երաժիշտների կողմից:

¹² Աղամյան Ա., Տիգրան Չուխանյանի դաշնամուրային ստեղծագործությունը, էջ 11:

¹³ Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում Բ., տպ., Երևան, 2012, էջ 564:

**THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE
TURKISH MUSIC SCENE**

Margarita Krtikashyan

(Summary)

The goal of this article is to show the role of Tigran Chukhajian in the Turkish musical sphere. While researching the topic, it became known that in the 20th century, the Turkish music was enriched with new genres that initially originated in Europe. Armenians played a huge role in the foundation and development of symphonies, operas, ballets, choirs, orchestras and musical companies in the Turkish musical sphere, one of whom is Tigran Chukhajian, who influenced not only the development of Armenian music, but also the development of several Turkish musical genres.

**РОЛЬ ТИГРАНА ЧУХАДЖЯНА НА ТУРЕЦКОЙ
МУЗЫКАЛЬНОЙ СЦЕНЕ**

Маргарита Кртикашян

(Резюме)

Целью статьи было показать роль Тиграна Чухаджяна на турецкой музыкальной арене. При изучении темы стало известно, что в двадцатом веке турецкая музыка обогатилась новыми жанрами, которые изначально возникли в Европе. В организации и развитии симфоний, оперы, балета, хоров, оркестров и компаний на турецкой музыкальной арене большой вклад имели армяне, одним из которых является Тигран Чухаджян, кто, благодаря своей деятельности, сыграл большую роль не только в развитии армянской музыки, но и нескольких турецких музыкальных жанров .